

ԱՌԱՋԱԲԱՆ

Իրանական աղբյուրագիտությունը Հայաստանում դեռևս 18-րդ դարից զարգացել է հիմնականում պարսկական վավերագրագիտության ուղղությամբ՝ ելնելով այդ աղբյուրների ուսումնասիրության առաջնահերթությունից ու կարևորությունից, որը սկզբնապես բխում էր Հայոց Եկեղեցու քաղաքական ու սոցիալ-տնտեսական պահանջներից: Այդ փաստաթղթերն ուսումնասիրելով ու օգտագործելով՝ կաթողիկոս Միմեոն Երևանցին կարողանում է բարելավել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տնտեսական վիճակը՝ վերադարձնել նրանից խլված կալվածքները, թեթևացնել նրա կողմից խանին վճարվող հարկերը¹: Հետագայում գիտակցելով պարսկերեն վավերագրերի կարևորությունը հայագիտության համար՝ որոշ ուսումնասիրողներ սկսում են օգտագործել նրանց տվյալներն ու անգամ ներառել ամբողջական փաստաթղթեր իրենց հետազոտություններում²: Հայ իրանագետները զգալի աշխատանք են կատարել Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ուսումնասիրության և հրատարակության ուղղությամբ: Սակայն պարսկերեն վավերագրերից բացի հայագիտության համար մեծ արժեք ունեն նաև պարսկական պատմագրության նմուշները, որոնց տեղեկությունները կարելի է օգտագործել հայոց պատմությանը զանազան հարցերի քննության ժամանակ:

¹ Միմեոն Երևանցի, Ջամբո, Երևան, Մուղնի հրատ., 2003, էջ 51-52, 206, 208:

² Այս մասին մանրամասն տե՛ս Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը հայոց պատմության սկզբնաղբյուր (XVII դարի II կես – XIX դարի I կես), Դոկտորական ատենախոսություն, Երևան, 2017, էջ 18-27:

Մեֆյան տիրապետության շրջանում Արևելյան Հայաստանում գործող վարչաքաղաքական համակարգի և Կովկասում ձևավորված վարչական միավորների ուսումնասիրման տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի Միրզա Մամի՛այի «Թագքիրաթ ալ-մուլուք» աշխատությունը, որի բնագիրը թարգմանաբար ներկայացվում է սույն հրատարակությամբ:

Իրանի պատմագրությունը

Արաբների կողմից Սասանյան պետության նվաճումը 632-651 թթ. ու նրա բնակչության հետագա մահմեդականացումը Իրանի պատմության բեկումնային ժամանակահատվածներից էր, երբ ընդհատվում է միջին պարսկերեն գրավոր գրականության, այդ թվում նաև պատմագրության բնականոն զարգացումը: Օմայյան խալիֆ Աբդ ալ-Մալիքի իշխանության շրջանում (685-705 թթ.) արաբերենը դառնում է ողջ խալիֆայության պաշտոնական լեզուն՝ դուրս մղելով նրա կազմի մեջ ընդգրկված երկրների տեղական լեզուների գործածությունը գրավոր խոսքում: Երկդարյա ընդմիջումից հետո նոր պարսկերեն գրականությունը հանդես է գալիս միայն IX դարից և կապված է Իրանի մշակութային զարթոնքի հետ³:

Արաբերեն գրով վաղ նոր պարսկերեն լեզուն հանդես է գալիս IX դարի կեսերից բանաստեղծական երկերում ու իրանական էպոսի՝ «Շահնամեի» վաղ նմուշներում: Ֆիրդուսին իր անմահ երկը գրում է՝ հենվելով Սասանյան «Խվաթայ նամակ» կոչվող տարեգրության հին արձակ հատվածների վրա, որոնք հավաքվել

³ Ludwig Paul, Persian language: Early New Persian, Encyclopedia Iranica, available online: <http://www.iranicaonline.org/articles/persian-language-1-early-new-persian> (visited on August 24 2019).